«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների մեջ համագործակցելու կարողությունների ձևավորումը
ԱՌԱՐԿԱ	Քիմիա
ՀԵՂԻՆԱԿ	Քրիստինե Մուշեղյան
ՄԱՐԶ՝	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	179 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա ……5

Համագործակցային ուսուցման մեթոդներ……13

Համագործակցային ուսման կազմակերպումը……15

Եզրակացություն……29

Օգտագործված գրականության ցանկ……30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդնե-րի ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Ինչու եմ ընտրել այս թեման, որովհետև այն արդիական է: Ժամանակակից այս մեթոդը օգնում է ակտիվացնել երեխաներին, ստեղծել առանձնահատուկ աշխատանքի պայմաններ, նպաստում է երեխայի զարգացմանը և մեծացնում գիտելիքների շրջանակը: Համագործակ-ցային մանկավարժության նպա-տակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Բարձրացնում է ուսման առաջադիմությունը: Սովորողների անահատական մտային գործընթացների ակտիվացում: Սովորողի մեջ ներքին երկ-խոսության հարստացում: Այս մեթոդի վրա աշխատել են ամերիկացի գիտնականները՝ Ջոնսոնները, Ջոն Բրունները, Պասի Սահլբերգը, Սպենսեր Կագանը, ռուսներ՝ Ե. Ն .Իլինը, Վ..ֆ. Շատալովան, Ի.Պ .Վոլկովը: Մեր նպատակն այն է, որ ուսումնա-սիրենք այդ մեթոդը ավելի խորը, որը կնպաստի ավելիարդյունավետ դարձնելու տարրական դասարանների դասա-պրոցեսը: Դրանից ծագում են հետևյալ խնդիրները մեր աշխա-տանքի մեջ.

ա/ուսումնասիրելը տեսական նյութերը,

բ/ընտրել ավելի արդյունավետ մեթոդներ տարրական դասարանների համար

գ/նկարագրել մեթոդների կիրառումը իրական կյանքում:

դ/եզրակացություն:

Համագործակցային ուսուցումը ներկայացված է որպես ուսուցման մի արդյունավետ միջոց, որը մարդկանց համագործակցության սկզբունքներով ապրելու հնարավո-րություններ է ընձեռում: Համագործակցությունը խթանում է առաջադիմությունը: Հոգեբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ պրպտողական խնդիրների լուծումը այս կամ այն առարկայի գիտելիքների տիրապետման միջոցներից մեկն է և նպաստում է ճանա չողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածո-ղության

զարգացմանը: Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքրական՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հնարավորություններ: Այն թույլ է տալիս դասավանդողին՝ լուծելու ավանդական մեթոդներով իրականացվող կամ գրեթե անհնար թվացող՝ բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Լսարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի հավաքականություն, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից: Սովորողներն իրենց ավելի ազատ , անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում աշխատելիս, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Նրանք համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝ յուրաց նելով գիտելիքը և կիրառելով այն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է անտիկ դարաշրջանից: Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ. Գրված է Թալմուդում: Կոմենսկին հավաստում էր , որ սովորողները շահում են երբ սովորում են ուրիշից,

Նաև երբ սովորեցնում են ուրիշի:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են երեք տեսություններ՝սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման և վարքագծային ուսումնառության: Սոցիալական փոխկախվածության տեսության ներկայացուցիչները /Կուրտ Կաֆկա,Կուրտ Լևին/ խումբը դրտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում թ Պիաժեի Վիգոտսկու, Բրունների հայացքները; Ըստ Վիգոտսկու մտավոր ածխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի խրախուսումը: Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը տվել են Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին սոցիալական փոխկապվածության տեսությունը՝ նշելով նրա ազդեցությունը սովորողների վրա:

Համագործակցային ուսուցումը վերջին շրջանի մանկավարժագիտական, մեթոդական գրականության մեջ դիտվում է որպես ամերիկյան կրթական համակարգի առավելություն, մինչդեռ ոչ վաղ անցյալում' 80-ական թվականնե ին, խորհրդային շրջանի մանկավարժնորարարները' համագործակցության մանկավարժության նվիրյալները (Վ.Ֆ.Շատալով, Ս.Ն.Լիսենկովա, Ե.Ն.Իլյին, Ի.Պ.Վոլկով, Շ.Ամոնաշվիլի, Տ.Պ.ՇչետինիՕ, Վ.Ա.Կարակովսկի և այլն), նշանակալից հաջողությունների հասան համագործակցային ուսուցման գործընթացում' ապահովելով աշակերտների համախմբումը համախոհների կազմում: Նրանց մանկավարժական գործունեության արդյունքում կրթության բովանդակության օպտիմալ յուրացման հետ միասին հաջողությամբլուծվում էին նաև դաստիարակչական խնդիրներ:

ՈՒսուցման տարրական և միջին աստիճաններում շատ ավելի լայն տեղ պետ ք է տրվի ուսուցմաննորարական մեթոդներին ու միջոցներին, որոնց հիմքում ընկած է ուսուցման նկատմամբ կառուցողական մոտեցումը: Նման մոտեցում կիրառել են ամերիկյան հոգեբան Աքիները, լեհ դիդակտ Վ.Օկոնը և ուրիշներ:

Նրանց կարծիքով կառուցողական մոտեցմամբ կազմա կերպվող ուսուցումը ամենից առաջ սովորողներից պահանջում է մտավոր ակտիվության մշտական դրսևորում, օգնում է փոխանակել, վերակառուցել և յուրացնել նոր գիտելիքներ, տեղեկություններ: Փոխանակված գիտելիքները ընդհանրացման են ենթարկվում, և արդյունքում սովորողների գիտակցության մեջ առաջանում են նոր իմացական կառույցներ, որոնք մտածողության ընթացքում դառնում են «ինքնակառավորվող»:

Կրթության նկատմամբ կառուցողական մոտեցման նպատակը ընկալման խորության ապահովումն է, իսկ առանձնահատկությունը՝ աշակերտները կենտրոնանում են կարևոր գաղափարի և ոչ այնքան փաստերի վրա, կապեր են հաստատում գիտելիքների տարբեր մասերի միջև՝ էլ ավելի շատ հնարավորություն ունենալով վերացարկելու, որը զարգացնող ուսուցման կարևոր պահանջներից մեկն է. մեկնաբանում են սեփական գործողություններն ու գաղափարները և նշում դրանցինարավոր կիրառման ոլորտը: Ըստ կառուցողական կրթության հայեցակարգի՝ մեթոդը դիտվում է որպես մա նկա վարժական գործունեության միջոց, եղանակ, հիմնական գործիք, որովիրականացվում է ուսուցչի և աշակերտների համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նպատակադրված արդյունքին:

Նորարարական մոտեցման դեպքում ուսուցիչը «մատուցում է» նյութը, աշակերտը «վերցնում է» այն, եթե ցանկություն է ունենում, շատ դեպքերում դա չի էլ լինում: Կառուցողական մոտեցման դեպքում բազմաթիվ հնարքներով ուսուցիչը սովորողներին դրդում է ակտիվ որոնումների՝ իրենցճշմարտությունը գտնելու համար, ինչպես նաև սեփական կարծիքն արտահայտելու քննարկվողհարցի մասին: Ինչպես դա անում էր համագործակցային ուսուցման ակնառու դեմքերից մեկը՝ ռուս գրականության ուսուցիչ Ե.Ն.Իլյինը ինչպես ինքն էր ասում՝«մտքի աշխատանքը դարձնում էր հոգու աշխատանք»:

ՈՒուսուցիչը, ցանկանալով բոլոր կողմերով քննության առնել բացատրված ու յուրացված նյութը, ոչ թե յուրացումը ստուգում է սովորական դարձած հարց ու պատասխանով (զրույցի մեթոդ), այլ դրա Փոխարեն աշակերտ ներին առաջարկում է «մտածիՙր-զույգ կազմի՛ր, գաղափարներդ կիսիր» ռազմավարությունը, որը ներառում է հետևյալ ալգորիթմը: Քայլ 1-ին «Մտածի՛ր» Ուսուցիչը դա սի թեմայի վերաբերյալ հարց է տափս և աշակերտ ներին հանձնարարում 11 րոպե լուռ մտածել պ ա տ ա սխ ա նի մասին: Քայլ 2-րդ «Զույգ կազմի՛ր»: Ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է զույգեր կազմել և քննարկել, թե ինչ էին (4-5 րոպե) մտածում: Քայլ 3-րդ «Գաղափարներդ կիսի՛ր»: Այս դեպքում զույգերը ողջ դասա բանի հետ են կիսում իրենց քննա րկմա ն արդյունքները: Ուսուցիչը տարբեր զույգերի է հրավիրում և քննարկումը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև խոսելու և սեփական կարծիքը մյուսներին ներկայացնելու հնարավորությունից օգտվեն մասնակիցների մեծ մասը, կամ կեսից ավելին: Ամփոփումն ավարտելուց հետո խումբը անդրադառնում է անհասկանալիհարցերին ու թերըմբռնումներին: Ուսուցիչը ղեկավարում է երկխոսությունը զույգերի միջև, միաժա մանա կ հետևում է աշակերտ ների բանավոր խոսքի կուլտուրային, բառերի Իստակ 200 արտասանությանը, ճիշտ և' հայեցի շեշտադրությանը և այլն: Իսկ աշակերտները, շա րադրելով նյութը, վարժվում են բանավոր հաղորդակցման արվեստին:

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության:» Ջեյմս Ուայթսոն:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներինտրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը ՀՀ-ում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուոցման և ուսումնառության գործընթացում:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է:Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների

ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Քննարկված են համագործակցային մի քանի մեթոդներ:

Հայաստանը լիիրավ ինտեգրվել է համընդհանուր տնտեսությանը, տարածաշրջանային քաղաքականությանը և համընդհանուր ջանքերին՝ իր քաղաքացիների կյանքի պայմանները բարելավելու և խաղաղությունը պահպանելու ու զարգացնելու նպատակով: Հայաստանիդպրոցներն ու ուսուցիչները այսօր առնչվում են միանման խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպեսէլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրան-քային նոր մոտեցումները:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս: Դասավանդման խնդիրների լուծման նպատակ:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանք-ներ են, քան համագործակցային ուսու «Ուսուցումը համագործակցային կլինի այն

դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններինհարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.

- դրական փոխկախվածություն,
- դեմ առ դեմ փոխազդեցություն,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- խմբային գործընթացի մշակում:

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սահլբերգը փոխներգործուն /ինտերակտիվ/առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր:

«Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների- միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի

աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասրանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետ համագործակցային ուսուցման կազմակերպումը: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևոր Համագործակցությունն ստեղծում էինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ: ում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

1. Դրական փոխկախվածություն.Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ:Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն:Այն նպաստում է հանդուրժողականությանև վստահության ձևավորմանը:Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.Խմբի անդամները համգործակցում

են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար ։

Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքմիմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Սոցիալական հմտություններ

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայան հաշվետվություն և պատասխանատվություն: Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է.

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,

3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում:Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը:Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:Խմբի յուրաքանչյուր անդամ կարող է խմբային աշխատանքում ունենալ որևէ դեր՝ գրանցող, զեկուցող, ստուգող, ընթերցող և այլն: Դերերի կարևորության վրա առանձին ուշադրություն հրավիրելը աշակերտներին մղում է ավելի լուրջ վերաբերվել և իսկապես կատարել դրանք:Համագործակցային խմբերում ախակերտները իրենք են միմյանց սովորեցնում նյութի այս կամ այն հատվածը: Յուրաքանչյուրը պատասխանատու է մյուսների կողմից նյութը յուրացնելու համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք։

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից։ Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը։ Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը։ Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում։ Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները։Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին։

Խճանկար (Ջիգսո, Jigsaw):

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է։ Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից։Խճանկար փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,

- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում:

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք:

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան:Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ կառաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ «Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում»: Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես

էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Կագանի մեթոդով համագործակցային ուսման եղանակ

Դոկտոր Սպենսեր Կագանի «Համագործակցային ուսուցում» աշխատությունը հրապարակվել է 1985 թվականին (Սան Կլեմենտե, Կալիֆորնիայի նահանգ. Kagan Publishing)։ Այս գիրքը համագործակցային ուսուցման եղանակների ամենալիարժեք և ամենաարդի ժողովածուն է։ Այն չի առնչվում որևէ այլ մեթոդի. դրանում ներկայացված մեթոդը հայտնի է որպես Կագանի մեթոդ։ Այն մեթոդներից կազմված ժողովածու է, որոնք տեսակավորված են հիմնականում ըստ աշակերտների կարողությունների։ Կագանի մեթոդի հիմքում դրված է համագործակցության գաղափարը, և այդ մեթոդով փորձ է կատարվում հաշվի առնել անհատական յուրահատկությունները։

Ուսուցանում–ուսանում գործընթացն ունի երկու նպատակ՝

- Տվյալ առարկայի նպատակը՝ դասավանդվող նյութի հիման վրա զարգացնել ճանաչողական հմտությունները։
- Սոցիալական նպատակը՝ առաջինը, աշակերտները պատասխանատվություն են ստանձնում։Երկրորդ, նյութը դասավանդվում է համագործակցության վրա հիմնված տարբեր եղանակներով, ինչն իր հերթին զարգացնում է նաև աշակերտների շփման հմտությունները։

Համագործակցության վրա հիմնված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է։ Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման հմտություններ։ Ուսուցիչն

աշակերտներից չի պահանջում նման հմտություններ ունենալ. փոխարենը, նա նպաստում է դրանց զարգացմանը՝ կիրառելով համագործակցություն ապահովող տարատեսակ մեթոդներ։ Ի տարբերություն Կագանի մեթոդի, ավանդական խմբային աշխատանքը չի պահանջում համագործակցության այդքան սերտ մակարդակ, և պարտադիր չէ, որ հաջողությունը պայմանավորված լինի բոլոր աշակերտների մասնակցությամբ։ Ուսման գործընթացի կազմակերպումը բաղկացած է 6 հիմնական տարրից։

Խումբ

- Համատեղ աշխատող խումբը բաղկացած է 3–6 մշտական անդամներից։ Խմբի անդամներիմիջև կապը սերտ է. նրանք ճանաչում, ընդունում և աջակցում են միմյանց։
- Խմբի կազմը միատարր չէ՝ մասնակիցների ընդունակությունները, սեռը, համակրանքը նէթնիկական ծագումը տարբեր են։
- Խմբերի ձևավորման եղանակները՝ պատահական կամ նպատակային։
- Պարտականությունները խմբում, օրինակ՝
  - — քարտուղարը պատասխանատու է ճիշտ խոսքի համար.
  - — ժամանակը հաշվառողը պատասխանատու է ժամանակային սահմանափակումներինհետևելու համար.
  - – աշխատանքների կատարման պատասխանատուն ապահովում է բոլորի կողմից իրենց աշխատանքի պատշաճ կատարումն ու խմբում արդյունավետ հաղորդակցությունը: Խոսնակը պատասխանատու է ուսուցչի հետ կապ պահպանելու համար, զեկուցում է կատարված աշխատանքի մասին և ներկայացնում կատարված առաջադրանքը։
- 3ե ԲԲԸԽմբում առաջադրանքների բաշխումը, աշխատանքի կազմակերպումն ու կիրառվելիք մեթոդաբանության որոշումը (օրինակ՝ «Կլոր սեղան», «Բառերի շրջապտույտ», «Խճանկար» և այլն)։

Դասաժամի կառավարումը

- Դասարանը պետք է դասավորված լինի այնպես, որ աշակերտները հեշտությամբ հաղորդակցվեն իրենց խմբի մասնակիցների հետ: Խմբային աշխատանքի ընթացքում աղմուկի մակարդակը կարգավորելու համար պետք է նախապատրաստել որոշակի նշան կամ խորհրդանշան (որի շուրջ դասարանը նախապես համաձայնության է եկել):
- Սահուն և արդյունավետ աշխատանքի համար պայմաններ ապահովելու նպատակով գործիքների տեղը և աշխատանքի վայրը պետք է անփոփոխ մնան:

Համագործակցելու նպատակը

Գոյություն ունի աշակերտների՝ համագործակցելու ցանկությանը նպաստելու և այն պահպանելուերեք եղանակ՝

- «համայնքի» (խումբ, դասարան) ձևավորում,
- համագործակցային առաջադրանքներ,
- խրախուսման և գնահատման

համակարգի կիրառում:Համագործակցելու

պատրաստակամություն

Շփվելու հմտությունները զարգացնելու համար կարելի է օգտագործել մի շարք վարժություններ.

- մոդելավորող ուսումնական խումբ,
- համատեղ մեկնաբանություն,
- դերախաղ,
- դիտարկում,
- փոխօգնություն,
- պարտականությունների

որոշում/բաշխում:

Համագործակցային ուսման

հիմնական սկզբունքները

Եթե հետևյալ բոլոր սկզբունքները չեն պահպանվում, համագործակցային ուսումը տեղի չի ունենում։Չորս հիմնական սկզբունքները (Սպենսեր Կագանի համաձայն)՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝ ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ։ Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում։

բ) Անձնական պատասխանատվություն՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար։ Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին։ Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար

գ) Կառուցողական փոխկախվածություն՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման համար պահանջվում դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն։

դ) Հավասարաչափ մասնակցություն՝ աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների։ Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով։

Եղանակներ

Ուսուցման համագործակցային եղանակներից յուրաքանչյուրն իր կիրառությունն ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կարող է կիրառվել տարբեր իրավիճակներում։ Ուսուցման եղանակն ընտրելիս պետք է հաշվի առնել՝

- աշխատանքի համար հատկացված ժամանակը,

- վարժությունների տեսակները,
- դասերի տեսակները,
- բովանդակությունը,
- փոխկախվածության աստիճանը։

Վերը նշվածի համաձայն՝ ստորև ներկայացվում են ուսուցման համագործակցային աշխատանքի մի շարք եղանակներ, որոնք նախատեսված են տարբեր իրավիճակներում կիրառության մեջ դրվելու համար։

Խումբ ձևավորելու եղանակը

Մարդկանցից կազմված խճանկար՝ խմբի ձևավորման «պատահական» եղանակ։ Այս դեպքում նկարները կտրատվում են մասերի՝ խմբում ընդգրկված աշակերտների թվին համապատասխան։ Յուրաքանչյուր աշակերտի տրվում է նկարի մեկ կտոր։ Նրանք պետք է փոխանակեն նկարի կտորները միմյանց հետ։ Յուրաքանչյուր աշակերտ պետք է առնվազն մեկ անգամ փոխանակի նկարի իր կտորը։ Այնուհետև աշակերտները պետք է գտնեն, թե ում մոտ է նկարի մյուս մասը՝նկարն ամբողջությամբ կազմելու համար։ Այս եղանակով խմբերը ձևավորվում են պատահականորեն, մինչդեռ, եթե նկարի կտորների հետևի մասում գրվեն աշակերտների անունները, ուսուցման այս եղանակը հնարավոր է օգտագործել նպատակային կերպով խումբ ձևավորելու համար։

Նոր թեմայի ընկալմանը նպաստող եղանակ

Երեք քայլից բաղկացած հարցազրույց։
Ուսուցիչը խմբի անդամներին տալիս է Ա, Բ, Գ և Դ
տառերով քարտեր։Յուրաքանչյուրի աշակերտի
տրվում է տարբեր տեքստ և վարժություն։

Խմբի յուրաքանչյուր անդամ կարդում է իր վարժությունն ու տեքստը և նշումներ է կատարում։

1. «Ա» աշակերտը «Բ»–ին պատմում է իր տեքստի մասին, մինչ «Գ»–ն զրուցում է «Դ»–ի հետ իրտեքստի մասին։
2. «Բ»–ն պատմում է «Ա» –ին, իսկ «Դ»–ն պատմում է «Գ»–ին իրենց կարդացածի մասին ։

3. Բամբասանք՝ «Ա»–ն «Գ»–ին և «Դ»–ին պատմում է այն, ինչ լսել է «Բ»–ից, որից հետո «Բ»–նպատմում է այն, ինչ լսել է «Ա»–ից։ Այնուհետև «Գ»–ն կրկնում է այն, ինչ իրեն պատմել է «

3. «Դ»–ն կրկնում է «Գ»–ից լսածը։
4. Խմբի անդամները նշումներ են անում կամ լսում են ուրիշներին, որպեսզի չորս անդամներն էլծանոթանան տեքստերի հետ։

- Ի՞նչ է պետք հաշվի առնել համագործակցային մեթոդը կիրառելիս

Կազմակերպման եղանակները պետք է ընտրվեն կրթության բովանդակության և անհրաժեշտ մեթոդաբանության, ինչպես նաև աշակերտների կարիքներին համապատասխան։

- Ճկունությունը

Տարբերակում կատարելը չպետք է դառնա աշակերտների «պիտակավորման» կամ «հայեցողական ընտրության» պատճառ։ Յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա տվյալ պահին իր համար օպտիմալ ծավալի աշխատանք։

Համագործակցային ուսուցման
մեթոդով անցկացվող դաս
Նախապատրաստման ոճը.

- Թեմայի ուսումնասիրում՝
- Դասի տրամաբանական պլան

- (լսողական) տեսողական օժանդակ նյութեր
- Հարցեր, հնարավոր պատասխաններ
- Դասի տրամաբանական կառուցվածքի ստուգում

Միակողմանի փոխազդեցության ծրագրում

Թեմայի ուսումնասիրում. ինչպե՞ս այն դարձնել համագործակցային

- Դասի բաժանում չորս մասի
- Ո՞ր մասերը կարող են ինքնուրույն ուսումնասիրվել
- Գրավոր տեքստեր
- Տեսողական օժանդակ նյութերի պատրաստում
- Գործիքների պատրաստում (փաթեթավորման թղթի, ընդգծիչների ձեռքբերում)
- Լուսապատճենում
- Բազմակողմանի փոխազդեցությունների ծրագրում
- Դասի պլանի ստուգում չորս սկզբունքների պահպանման մասով

Նախապատրաստման ժամանակը - Հավանաբար ավելի քիչ, Հավանաբար ավելի շատ

Հետագա կիրառելիությունը - Հավանաբար հնարավոր կլինի այն նորից ամբողջությամբ օգտագործելՀավանաբար հնարավոր կլինի այն նորից մասամբ օգտագործել (տեքստերը, օժանդակ նյութերը)

Դասի սկիզբը - Շահագրգռելը՝ աշակերտների հետաքրքրությունը որևէ կերպ գրավելըԿահույքի վերադասավորում՝ անհրաժեշտության դեպքում (եթե սենյակն արդեն իսկ դասավորված չէ համագործակցային ուսուցման համար)Խմբերի ձևավորում

Շահագրգռելը՝ դասը կառուցվում է ըստ աշակերտների նախնական գիտելիքների: «Պարտականությունների քարտերի» բաժանում և պարտականությունների բաշխում. ո՞վ ինչի՞ համար է պատասխանատու

Աջակցություն դասի ընթացքում - Ուսուցչի կողմից հնչում է բացատրություն, հարց,

(ֆրոնտալ աշխատանք) պատասխան, իրականացվում է համատեղ քննարկումՓոքր խմբերին և անհատներին ցուցաբերվող օժանդակություն (անհատական ոճ)

Ուսուցչի շարժումները - Քիչ շարժում, կարող է անշարժ մնալ գրատախտակի մոտ, բոլորին տեսանելիվայրումՈւսուցիչը քայլում է խմբերի մոտով, մոտենում որևէ աշակերտի, միասին աշխատում

Ձայնը - Բոլորը պետք է կարողանան լսել, ուստի ձայնը պետք է բարձր լինիԿարող է ցածր խոսել՝ անհատականերանգով

Հարաբերվելը -

ՊաշտոնականԱզ

ատ/շփվող

Ամենաանհրաժե

շտ

հատկանիշները

- ճարտասանական լավ հմտություններ
- Արդյունավետ հաղորդակցում՝ աշակերտների ուշադրությունը պահելու համար
- Կարգուկանոն ապահովելու ունակություն
- Արագ և հնարամիտ պատասխաններ տալու ունակություն
- Ճշգրտություն
- Գրագիտություն
- Բացատրելու հմտություններ
- «Դերակատարության» շնորհք
- Շարունակական կենտրոնացում (չպետք է ասի որևէ սխալ բան կամ որևէ բան սխալ կերպով)
- Կազմակերպչական լավ հմտություններ
- Վճռականություն
- Ժամանակի լավ զգացողություն
- Հաղորդակցման լավ հմտություններ
- Ուշադրության հավասար բաշխման ունակություն
- Աշակերտներին հասկանալու ունակություն
- Լայնախոհ անձնավորություն

- Ստեղծագործական միտք՝ հիմնականում աշակերտների հետ աշխատանքը կազմակերպելու և նրանցշահագրգռելու մասով
- Անհատների ձեռքբերումների գնահատում (բանավոր թեստեր, գրավոր աշխատանքներ)
- Ամբողջ դասարանի վարքի գնահատում
- Տարբեր խմբերի գնահատում, անհատական և

խմբային ձեռքբերումների գնահատում

Համագործակցային ուսուցման մեկ օրինակ՝

ՈՒսուցիչը գծում է Т ձևի հինգ պատկեր : Կտրում է նշված կետագծերի ուղղությամբ:

Յուրանչյուրից ստացվում է չորս կտոր: Հինգ ծրարներից յուրաքանչյուրի մեջ տեղադրում

է Т-երից մեկի չորս կտորնները: Գծակերտներն բաժանում է հինգ խմբի և յուրաքանչյուր խմբին տալիս է մեկ ծրար: Հանձնարարվում է վերականգնել Т-երը: Յուրաքանչյուր խումբ կատարում է առաջադրանքը՝ միմյանց օգնելով:

.

.Համագործակցային

ուսուցմամբ դասի օրինակ Առարկա ---մայրենի

Դասարան --չորրորդ

Թեմա ---Հովհաննես

Թումանյանի արձանի մոտ

Հաղորդման դաս

Նպատակը---ա/ ուսումնական --վարժ , հասկանալով ընթերցել, անսխալ գրել, վերլուծել ու բնութագրել: Փոքր խմբերով կքննարկեն Թումանյանի ստեղծագործությունները, ինչպես նաև լեզվական նյութի շուրջ կկատարեն աշխատանք՝ զարգացնելով համագործակցային կարողությունները:

բ/սոցիալական ---ձեռք կբերեն գիտելիքներ Հ. Թումանյանի կյանքի ևգրական գործնեության մասին:

Սպասելիք արդյունքները---կկարողանան վարժ կարդալ, կտարբերակեն հեղինակի ամեջբերվող խոսքերը: Դերային խաղով կներկայացնեն հերոսների երկխոսությունը, կկրկնեն բառակազմության մասին ունեցած գիտելիքները՝ արմատ, ածանց, պարզ և բարդ բառեր :

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ մեթոդներ---,Կանխագուշակում հենակետային բառերով և արտահայտություններով,,

,,Բացատրական ընթերցանություն,, ,, Համագործակցային խմբեր,, Քառաբաժան,, :

Դասի ընթացքը, խթանում.

Գրատախտակին նախօրոք գրում ենք դասի վերնագիրը, նբանաստեղծ, Դսեղ, հեքիաթներ ,բանաստեղծություն, լեգենդ, հայրենասեր, Թիֆլիս բառերը:

Աշակերտներին առաջարկում ենք կանխագուշակումներ անել տեքստի բովանդակության վերաբերյալ: Երկրորդ փուլ, իմաստավորում---այս փուլումընտրում ենք ,,Բացատրական ընթերցանություն մեթոդը Աշակերտներն ընթերցում են դասանյութը՝ զուգահեռ բացատրելովանծանոթ բառերը, կետադրությունը,գուշակում են ստեղծագոր ծությունների վերնագրերը: Բառային աշխատանքի ժամանակ առաջադրումենք բացտրել դասագիրք, կինոնկար, սնուկ, հայրենասեր, ուսուցչուհի բառերի կազմությունը:

Լեզվական երեքն են, որոնց կատարումը կարելի է կիրառել ըստ մակարդակների ոոոուսուցմամբ՝համագործակցային խմբերի, բաժանել երեք խմբերի:

Առաջին առաջադրանքը հանձնարարում ենք առաջին խմբի աշակերտներին; Նրանք պետք է կազմեն հինգբառ ՝ մեկական անգամ օգտագործելով երկու տողերից ընտրված արմատնները.

Ներկ, ջուր,

գիրք,

ամիս, դեմք

Գիր, գիծ,

հոր,

գարան,

պնակ

Երեխանները իրար օգնելով կատարում են:

Երկրորդ առաջադրանքը հանձնարարում ենք երկրորդ խմբին՝ տրված բառերով կազմել բարդ ածանցավոր բառեր: Աշակերտները մտքեր փողանակելով կազմում են թագավորանիստ, եզրափակեց, ծուռումուռ, գյուղական, գարնանային, գյուղացի:

Երրորդ առաջադրանքը-այս խմբի աշակերտները պետք է

մեկնաբանեն Հ. Թումանյանի Հետևյալ շատ իմաստուն քառյակը՝

-Ինչքան ցավ եմ տեսել ես,Նենգ ու
դավ եմ տեսել ես, Տարել ներել ու
սիրել, Վատը՝ լավ եմ տեսել ես:

Քառյակի բառերով կազմել բարդ և ածանցավոր բառեր՝ նենգամիտ,

դավադիր, ցավագինՏեսական, տեսություն:

Այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները:

Կշռադատման փուլ—կիրառում ենք ,,Քառաբաժան,, մաթոդը:

Ինչ ձայն էի լսում Ինչ էի տեսնում

Ինչ էի զգում Ինչ էի մտածում

Վերջում ամփոփում ենք դասը և աշակերտները կարդում են ,,Այսպիսով Թումանյանը

Մեր բոլորի սրտում է: Ահա թե ինչու են նրան կոչում Ամենայն հայոց բանաստեղծ մեծն Թումանյանը:,,հղումը և մեկնաբանում:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերովաշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի

ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իրհետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման գործընթացում: Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ—ում:

Համագործակցային ուսուցման
կարևորագույն ձեռքբերումներն են.

ա/ անձի զարգացումը և
անհատականության ձևավորումը:

բ/ հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը:
գ/սթրեսի հաղթահարումը:
դ/շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Երեխաները իրենց կյանքում կարիք ուրնեն արդյունավետ
խոխհարաբերությունների, որիզարգացմանը
մեծապես նպաստում է համագործակցային ուսուցումը:
Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավեղանակ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒսումնասիրելով համագործակցային ուսուցումը կարելի է ասել, որ այս մեթոդի ճիշտ և տեղինկիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը, սովորողի մեջ ձևավորելով նոր գաղափարներ, հետաքրքրությունները: Համագործակցային ուսուցումը որպես ուսուցման մի արդյունավետ միջոց, որը մարդկանց համագործակցության սկզբունքներով ապրելու հնարավորություններ է ընձեռում: Համագործակցությունը խթանում է առաջադիմությունը: Հոգեբանների և մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ պրպտողական խնդիրների լուծումը այս կամ այն առարկայի գիտելիքների տիրապետման միջոցներից մեկն է և նպաստում է ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքրական՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հնարավորություններ:

Այսպիսով, այն թույլ է տալիս մեզ լուծելու ավանդական մեթոդներով իրականացվող կամ գրեթե անհնար թվացող՝ բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Լսարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի հավաքականություն, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից:

Սովորողներն իրենց ավելի ազատ, անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում աշխատելիս, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Նրանք համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝ յուրաց նելով գիտելիքը և կիրառելով այն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա Ափոյան---Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում:
2. Վիքիպեդիայի ազատ հանրագիտարանից
3. Ա մանուկյան ---ժամանակակից դասի արդյունավետության բարձրացման միջոցնները
4. Լուսինե Պետրոսյանի բլոգ—ուսուցման ժամանակակից մեթոդները,
5. 101---գաղափար նորարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար
6. Լիլիթ Թորգոմյան, Սոֆի Թորգոմյան ---Կրթական ավանդական և նորարական մեթոդներիհարաբերակցության հարցի շուրջ
7. Պասի Սոլբերգ—համագործակցային ուսուցումը Ֆիլյանդիայում
8. Տատյանա Տրոշկինա---
   ՈՒսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներըԴոկտոր Սպենսեր Կագան
9. ..Համագործակցային ուսուցում.. Դասախոս-Պապիկյան